Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ
2023 թ.ֆինանսական գործունեության
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ 2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը, ստացված միջոցների ընդհանուր գումարը կազմել է **49,533,527** դրամ: Հաշվի առնելով 2023թ. հունվարի 1-ի դրությամբ **4,222,939** դրամ մնացորդը և **64,725** դրամ արտարժույթի փոխանակման կուրսային դրական տարբերությունը, ընդհանուր գումարը կազմել է **53,821,191** դրամ:

ԽԱՊԿ-ը 2023թ. ընթացքում ստացել է դրամաշնորհներ՝ Հանուն ժողովրդավարության ազգային հիմնադրամից (NED, ԱՄՆ) – 33,788,811 դրամ, Նիդեռլանդների թագավորության դեսպանատնից - 2,980,644 դրամ, Կանադայի դեսպանատնից – 10,386,272 դրամ, Ինտերնյուս Նետվորկից - 2,371,800 դրամ: Նաև հավաքվել են անդամավճարներ – 6,000 դրամ՝ կանոնադրական ծախսերի համար:

Հաշվետու ժամանակաշրջանում ծախսվել է **47,464,809** դրամ, որից.

1. «Լրատվամիջոցների բարեփոխումների ջատագովություն Հայաստանում», ծրագրի դոնոր՝ NED, ԱՄՆ – 35,053,301 դրամ:
2. «Դատական գործեր՝ կապված լրատվամիջոցների հրապարակումներում վիրավորանքի և զրպարտության հետ», ծրագրի դոնոր՝ Նիդեռլանդների թագավորության դեսպանատուն – 3,124,008 դրամ:
3. «Լրատվամիջոցների հրապարակումներում վիրավորանքի և զրպարտության հետ կապված գործերի քննարկման դատական պրակտիկայի բարելավում, ներառյալ մոնիտորինգը և դրա արդյունքները հանրությանը ներկայացնելը», ծրագրի դոնոր՝ Կանադայի դեսպանատուն – 7,483,256 դրամ:
4. «Խոսքի ազատության զարգացումը երկրում, լրագրողների և լրատվամիջոցների իրավունքների պաշտպանությունը», ծրագրի դոնոր՝ Ինտերնյուս Նետվորկ – 1,790,600 դրամ:
5. Կազմակերպության կանոնադրական ծախսեր – 13,644 դրամ:

Դրամաշնորհ տրամադրած կազմակերպությունների հետ համագործակցության պայմաններին համապատասխան՝ նրանց ժամանակին ներկայացվել է ծրագրերի և ծախսվող գումարների ամբողջ հաշվետվությունը: Բոլոր եկամուտները և ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են ԽԱՊԿ-ի հաշվապահությունում:

2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է **6,356,382** դրամ:

Նախագահ՝ Ա.Մելիքյան

Հաշվապահ՝ Ա.Պողոսյան

Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ՝ Ա.Պապյան